ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԵՐԳԸ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԲԵՄԵՐՈՒՄ

Ամերիկյան համայնքի երաժշտասրահներում վերջերս հյուրախաղերով հանդես եկավ ղարաբաղցի երիտասարդ դերասանուհի և երգչուհի Անահիտ Իշխանյանը: Երիտասարդ արտիստուհին ավարտել է Ստեփանակերտի թատերական ստուդիան, աշխատել մարզկենտրոնի Մ. Գորկու անվան հայկական դրամատիկական թատրոնում: Այժմ սովորում է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի ռեժիսորական բաժնի 4-րդ կուրսում, զուգահեռ վոկալի դասեր է վերցնում ՀՍՍՀ ժողովրդական արտիստուհի Վարդուհի Խաչատրյանից:

Լոս Անջելեսում և Նյու Յորքում տեղի ունեցած յոթ համերգների (որոնցից հինգը՝ հայկական դպրոցներում, բարեգործական հիմունքներով) ժամանակ կատարեց մոտ երկուսուկես տասնյակ ազգագրական, ժողովրդական, հեղինակային երգեր՝ հիմնականում ղարաբաղյան: Արտիստուհու երգացանկում տեղ էին գտել Մանդակունու «Ղարաբաղ», Գ. Գաբրիելյանի «Ղարաբաղի հորովելը», «Գանձասար», «Ամարաս» երգերը, որոնք լայն մասսայականություն են վայելում հայաշատ բոլոր վայրերում: Լոս Անջելեսում նրան նվագակցել է տեղի «Նաիրի» ժողգործիքների նվագախումբը: Ա. Իշխանյանին ընկերակցել է ամերիկահայ ճանաչված երգիչ Հարութ Փամբուկչյանը:

Իր ոգեշունչ կատարումներով ղարաբաղցի երգչուհին ամերիկահայ երաժշտասերների հայրենաբաղձ սրտերում բորբոքել է սեր ու անմար կարոտ առ հայրենիք: Այդ մասին են վկայում ամերիկահայ մամուլում տպագրված ազդերն ու գնահատականները. «Ինչպե՞ս չերթալ և չլսել քաջարի, ամիսներե ի վեր տառապող, տոկացող հերոս հայրենակիցներուս տոհմիկ կենցաղը երգերու միջոցավ: Եվ ի՜նչ հրճվանք ու գոհունակություն. նոր ծլող աստղ մը, նոր ինքնատիպ երգեր և նոր հետաքրքրքրական մեկնաբանություն... Անահիտ Իշխանյան հրապուրիչ է, ուշիմ և շնորհալի: Կերգե պարզ, զգացումով և հասկացողությամբ. խորունկ և հաճելի է, երբ բառերը կերգե, բայց ինչո՞ւ տրամադրությունը և ապրումները կանջատե, երբ միայն երաժշտությունը կնվագե տուներու միջև»,— գրել է երաժշտագիտուհի Անգինե Քեշիշյան-Մուրադյանը «Նոր կյանք» շաբաթաթերթում:

«Անահիտ Իշխանյան իր յուրահատուկ ոճով, ղարաբաղյան բարբառի հարազատ ձայնելևէջներով, ինչպես նաև ըզգայնությամբ կրցավ հաղորդել իր ունկնդիրները, փոխադրելով զանոնք պահ մը Ղարաբաղի սարերը, ապրեցնելու համար գեղջկական կյանքի հմայքը»:— Նույն թերթում իր կարծիքն է գրել Նահապետ Մելքոնյանը:

Մնում է ավելացնել, որ երիտասարդ երգչուհու համերգային շրջագայությունը կազմակերպել էին «Նոր կյանք» շաբաթաթերթի խմբագրությունը և բանաստեղծ Վահրամ Հաճյանը:

Հ. ԱՑՎԱՋՅԱՆ